

## Հայկական գիտահետազոտական հանդույց Armenian Research & Academic Repository



Առևտ աշխատանքն արտանագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասուրյաթե 3.0» արտանագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենը և տարրելն եղուրը ցանկացած ձևաչափով կամ եղիչով  
ձեռփոխել կամ օգտագործել առևտ եղուրը ստեղծելու համար եռը

You are free to:

Share – copy and redistribute the material in any medium or format

Adapt – remix, transform, and build upon the material

Ա. Խ. Հ. Ա.

Հ. Ս. Խ. Հ.

ՊԵՐԼԵՎԱՐԵՆԻ բալոր յիւկըների, միացի բ

# ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՀՐԱՑԱՆԱՁԻԴ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԻ 1891 ԹՎԱԿԱՆԻ ՏԻՄԱՐԻ  
Յ ԳԾԱՆԻ ՀՐԱՑԱՆԸ ԽՆԱՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ


Դերամշակված և Որանիյենքառ մի նախկին հրածգական դրապ-  
րոցի հրատարակությունից, Կ. Կ. Բանակի Հրածգական Հանձ-  
նաժողովի խմբագրությամբ:

Թարգմ. Ա. - ՅԱՎ. ՀԱՅ. ԵՒ. ՍՅ. Ե. Ե. Ե. Ե. Ե.

№ 7

Կովկասուան Կարմաղրոս Ռանակի Շազմա. Հեղ. Խորեղից կից  
Հայկական Խմբագրական Հրատարակչական Կոլեգիա

ԵԵՐԵՎԱՆ - 1924



Ա. Խ. Հ. Մ.

Հ. Ս. Խ. Հ.

ՊՐՈՎԻՆՑԻԱՆԵՐԻ ԲՈԼՈՐ ՀԵՏԼՐԵՆԵՐԻ, ԱՓացե՛մ

# ՀՈՒՅԱՏԵՏՐ

ՀՐԱՑԱՆԱՁԻԳ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆ 1891 ԹՎԱԿԱՆԻ ՏԻՊԱՐԻ  
Յ ԳԾԱՆԻ ՀՐԱՑԱՆԸ ԽՆԱՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ

*Վերամշակված և Որանիյենքառումին նախկին հրաձգական դրապ-  
րոցի հրատարակությունից, Կ. Կ. Բանակի Հրաձգական Հանձ-  
նաժողովի խմբագրությամբ:*

Թարգմ. Մ. Տ. - ՅԱՎՀԱՅԻՆԻՑԱՅՈՒ



Հ 7

Կովկասյան Խարմրագրու Քանակի Թազմա Հեղ. Խորհրդին կից  
Հայկական Խմբագրական-Հրատարակչական Կոլեգիա

ՅԵՐԵՎԱՆ - 1924



Հ 7  
23840

ԲԱՆՎՈՐ, ՊԱՏՎԻՐ ՀՐԱՑԱՆԴ ԻԲՐԵՎ ԲԱՐԵԿԱՄ.

ՆՐԱ ՄԵԶՆ Ե ՄՈՒՐՃԻ ՅԵՎ ՄԱՆԳԱՂԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ.

Հրացանածիզն առանց հրացանի մի-  
յելսույնն ե, ինչ վոր ատաղծագործն ա-  
ռանց կացինի, ինչ վոր հնցողն առանց  
մանգաղի, ինչ վոր յերկրագործն առանց  
զութանի, ինչ վոր ծիավորն առանց ծիու:

Սիրի՛ր, ափսոսի՛ր յեվ պահպանի՛ր  
հրացանն աչքիդ լույսից ել ավելի: Նա քե՛զ  
ել, բո ընկերոջն ել վտանգից կազատի:



Սիրիս, ավտոսօնից և պահպանից հրացանդ և սիշտ ժաքուր ու սարքին պահիր. ապա թե վոչ նու քեզ կը մատնի և մարտում, և պահակում, և վարժական հրացանաձգության միջոցին և կյանքիդ համար վտանգավոր բոպեյին:

(Հանր. Ռազմ.-Հեղ. Խորհրդի հրաման № 2413, 1921 թվ.)

Դելազանց և գիտակից հրացանաձիգ մշակելու առևնազլխավոր պայմաններից մեկն և հանդիսանում հրացանաձգի ծանոթությունը հրացանի բոլոր հատկանիշներին և առանձնահատկություններին:

Հրացանն իր կառուցվածքով քնքուշ և, փխրուն և նույնիսկ քմահաճ. իսկ անփույթ և կոպիտ վարվեցողությանը նրանով և պատասխանում, վոր ել չի ուզում յենթարկվել տիրոջը և լավագույն դեպքում, գնդակը բաց և թողնում, բայց ուղարկում և վոչ այնտեղ, ուր տերն և ուզում, իսկ ամենավատ դեպքում բոլորովին ել հրաժարվում և ծառայելուց—ել չի կրակում. կարծես պիտի ընդհակառակը լիներ, վորովհետեւ հրացանն ամբողջապես շինված և պողպատից, յերկաթից և փայտից՝ այնպիսի ամուր նյութերից, վորոնք փշացման յենթակային դառնում միայն կոպիտ ուժ գործադրելիս. Բայց իրոք, դուրս ե գալիս ընդհակառակը: Վերցնենք մի որինակ, վոր ամենից հաճախ և տեղի ունենում զորանոցային ամենորյա կյանքում: Զորանոց յեկավ կարմիր բանակայինը խոնավ, անձրեվոտ որվան մեկը, պահակը

փոխվելուց հետո, ծուլացավ իսկույն իր հրացանով գրադ-  
գել և առաջ պառկեց հանգստանալու, ամեն ինչ թողնե-  
լով «վաղվան». իսկ առավոտյան վեր կացավ, հրացանն-  
առավ ձեռքը և տեսավ, վոր ամբողջովին ժանգով և  
ծածկվել, փայտե մասերի վրա ճեղքեր են առաջացել,  
հատիկի վրա ջարդվածքներ, սվինն այն կողմը չի նո-  
յում, ուր հարկն ե, փակաղակը դժվարությամբ և բաց-  
վում և այլն: Յեվ այն հրացանը, վոր յերեկ բուրգում  
մաքուր և կոկլիկ կանգնած եր, այսոր նույնիսկ չի կա-  
րելի ճանաչել: Ստուգումը ցույց է տալիս, վոր հրացա-  
նաձիգը զորանոց գալով, հրացանը. վոչ թե բուրգն, իր  
տեղն եր դրել, այլ պատին եր դեմ արել, իսկ մոտից  
անցնող մի ուրիշ հրացանաձիգ դիպել եր նրան, գետին  
ձգել: Հետեվանքն այն ե լինում, վոր հրացանն ուղարկ-  
վում է արհեստանոց, այնաեղ նորոգվում ե, բայց  
յետ է դառնում արդեն վոչ այնքան կոկլիկ, իսկ կրա-  
կելիս ել գնդակներն ամեն կողմ է ցըռում: Ահա մի ուրիշ  
որինակ ևս, կարմիր բանակայինը դուրս յեկավ կրակե-  
լու, ձեռքում բոնել է հրացանը, վոր մեզ վոչ մի կառ-  
կած չի ներշնչում իր արտաքինով, բայց յերբ սկսում  
է կրակել, գնդակները մեկը մյուսի հետեվից վրիպում  
են, հանկարծական արձակյուններ են պատահում. պա-  
տահում է նաև վոր հաճախ հրացանը չի բացվում: Հրա-  
ցանաձիգը բաց է թողնում մի պահունակ, ապա մի  
ուրիշը և վերջապես զլիսի յե ընկնում հենց այդտեղ  
հրաձգարանում ստուգելու իր հրացան սարքելու կանոնա-  
վարությունը: Դուրս ե գալիս, վոր շարժական ողակնե-  
րը սխալ են ամրացված, զարկանի ասեղը հազիվ է դուրս  
նայում խփելու փակից, ձգանի զսպանակի պտուտա-  
կը մինչև դեմ առնելը չի պտուտակած և այլն: Սակայն  
հրացանը քանդելիս ևս նա թույլ է տվել մի շարք  
սխալներ. գրաւոր գետնի վրա չի փոել, այլ բոլոր մա-  
սերն սկսել է պարզապես դետնի վրա դնել, վորից նրանք

ավելի և կեղոստվել են. Ահա այսպիսի ողայմաննեւ-  
քում, յեթե հրացանը հանկարծ խոսելու լիներ, ապա  
անշուշտ պիտի դառը կերպով գանդատվեր ճակատա-  
զրից և այն չարչարանքներից, վոր նրան պատճառում  
ե իր հրացանի խնամելու և պահպանելու կանոնները  
չիմացող հրացանաձիգը:

Այսպիսի որինակներ գտնելու համար հեռու գնալ  
հարկավոր չի և կարելի լե բերել վորքան ուղեք, սիայն  
պետք ե ուշադրությամբ հետևել կարմիր բանակայիններին  
հրաձգարանում կամ նույն իսկ զորանոցում:

Այս բոլորը պատահում ե նրանից, վոր մի կողմից  
հրացանը խնամելուն հարկավոր նշանակությունը չի տըր-  
փում, իսկ մյուս կողմից ել՝ մինչև այժմ բացակայում ե  
«Յերեք գծանի հրացանի նկարագրությունը», վոր այն-  
քան անհրաժեշտ ե ամեն մի վաշտի ամենորյա կյանքում  
այդ բոլոր մանր-մունք պակտուները վերացնելու համար:

Բանակի կարիքներին ընդառաջ գնալով կովկասյան  
Հարմրադրոշ Բանակի Հրաձգային Հանձնաժողովը հրատա-  
քակում ե ներկա «Հուշատետր յերեքգծանի հրացանը խնա-  
մելու համար», այն հաշվով, վոր այս գրքույկը կը դառ-  
նա ամեն մի հրամանատարի և կարմիր բանակայինի առ-  
ձեռն դասագիրք և իբրև անհրաժեշտ ձեռնարկ կը ծա-  
ռայի հրացանով զինված բոլոր զորամասերում:

Ն, Բարանով

Հրացանը պես և նանայել լեզ ուրինակելի պահել. կարգին ու մահուր յեղած ժամանակ նա իավատամությամբ և ծառայում:

**Մառայության ինչ պայմաններում ել լինես, իոզ առ հրացանդ պահպանելու մասին:**

**Սյու հրացանն է սարքին, վորք սիրով խնամում են ու խղճով մահում:**

# Յ ԳԵՂԱՆԻ ՀՐԱՑԱՆ 1891 ԹՎԱԿԱՆԻ ՏԻՊԱՐԻ

**ՀՐԱՑԱՆԻ ՓՈՂԱՆՑՔԻ ՏՐԱՄԱՉԱՓԸ Յ ԳԵՂԱՆՓ Ե\*)**

Հրացանի յերկայնությունն Ե\*\*).

Հ ե տ ե վ ա կ ի ն ը .	Հ ե ծ ե լ ա կ ի ն ը .
սվինով՝ 2 արշ. 7 զեր.	սվինով՝ 2 արշ. 5 զերշ.
առանց սվինի՝ 1 ար. 13 զեր.	առանց սվինի՝ 1 ար. 11 զ.

Հրացանի ժամն Ե\*\*\*).

սվինով՝ $10\frac{1}{2}$ ֆ.	սվինով՝ մոտ 10 ֆ.
առանց սվինի՝ մոտ $9\frac{3}{4}$ ֆ.	առանց սվինի՝ $9\frac{1}{2}$ ֆ.

---

## ՄԵՏՐԱԿԱՆ ԶԱՓԵՐԵՈՎ (ԿԼՈՐ ԲՎԵՐԵՈՎ).

\*) 7,6 միլիմետր (մմ.):

\*\*) Հետևակի հրացանի յերկայնությունն ե սվինի հետ 1733մմ.

Հեծելակի	»	»	առանց սվինի 1289մմ.
	»	»	սվինի հետ 1611մմ.

\*\*\*) Հետևակի քաշն ե սվինի հետ 4,3 կիլոգր.

Հեծելակի	»	»	սվինի հետ 4 կիլոգր.
	»	»	առանց սվինի 3,7 կիլ.


Սվինի քաշը 0,2 կիլոգրամ.

## ՀՐԱՑԱՆԻ ՄԱՍԵՐԸ

ՓՈՂԸ ՓՈՂԱՏՈՒՓԻ, ԶԱՏԻՉ-ԱՆԴՐԱԴԱՐՁԻԿԻ,  
ՎԱՅՐԻՉՈՒՅՅ ՄԵԽԱՆԻՉՄԻ, ՆՇԱՆՈՅԻ ՅԵԼ ՀԱՏԻԿԻ  
ՀԵՏ:




ՓՈՂՆ ուղղում ե զնդակի թռիչքը:



Փողանցքն ունի 4 ակոս: Փամփշտանոց:


ՓՈՂԱՏՈՒՓԸ աեղավորում ե փակադակը



Վերին պատու-  
հան՝ փամփուշտ-  
ները դնելու  
համար:


Փորատներ՝ պա-  
հունակի համար:

Ծակ՝ պոչի  
պտուտակի  
համար:



Բույն՝ հե-  
 նարանի  
 պտուտակի  
 համար:  
 Ատորին պատռ-  
 հան՝ փանփուշտ-  
 ները պահեստա-  
 տուփից փողա-  
 տուփ տալու  
 համար:

Ծակ՝ ձգանի զըս-  
 պանակի պտռ-  
 տակի համար:  
 Ճեղք՝



Հենարան.

Ունկեր՝ ձգանի սեսնակի  
 համար:

ԶԱՏԻՉ. ԱՆԴՐԱԴԱՐՁԻԿԸ գատում (անջատում) և  
 հերթական փամփուշտը և անդրադարձնում եւ (դուրս և  
 նետում) պարկուճը:




ՎԱՅՐԻՉՈՒՅՑ ՄԵԽԱՆԻՉՄԸՆ կանգնեցնում ու վայր ե  
իջեցնում հրահանը և փակաղակը դուրս պրծնելուց պա-  
հում է:

Փակաղակալ.



Զգանի զողանակ.



Պոչ՝ մատը Սեռնակի  
վրեն դնե- ծակը.  
լու համար:



Ծակ՝  
պտուտակի  
Սեռնակ.

Առամբ՝  
հրահանը  
համար:  
պահելու  
համար:

ՆՇԱՆՈՑՆ ՈՒ ՀԱՏԻԿԸ հրացանը նպատակին ուղղե-  
լու համար են:


ՀԱՏԻԿ

1910 ԹՎԻ ՏԻՊԱՐԻ ՆՇԱՆՈՑ



Նշանոցի շրջանակը  
բարձրացրած ե  
1300-3200 քայլ:


**ՓԱԿԱՂԱԿԻ** փամփուշտը տեղն է քշում, փողը փակում է, բոցավառում է պատիճը, և դուրս է հանում պարկուճը:



Խփելու փակ՝ փողանցքը

փակելու համար:

Պառուկ.



Յելուններ.

Բոն ստեղ.

Փակաղակի  
կոթուն.



Պառուտակավոր  
կտրուճ՝ հրացա-  
նը խփելու վոտ-  
քի վրա դնելու  
համար:



Անցք դարձանի և

խփելու դսպանակի  
համար:

Փոքր փորոք՝ հրահա-  
նը պահպանիչ վոտքի-  
վրա դնելու համար:

Հրահան՝ դարձանը խփելու  
վոտքի վրա դնելու համար:

Նետիչպարկուճ-  
ները դուրս քա-  
շելու համար:

Պահպանական  
յելուն.



Կոճուկ.



Պառուտակավոր  
յելուն.

ԶԱՐԿԱՆ՝ պատիճը բոցավառելու համար:




Կտրուն.

Առեղ.

ԽՓԵԼՈՒ ԶԱՊԱՆԱԿ՝ զարկանին շարժում հաղորդելու համար:



ՄԻԱՑՆՈՂ ՔԱՆՈՆ՝ փակաղակի մասերն իրար միացնելու համար:




Յերկճիղ.

### ՊԱՀԵՍՏԱՏՈՒՓ ՏՎԻՉ ՄԵԽԱՆԻԶՄԻ ՀԵՏ

ՊԱՀԵՍՏԱՏՈՒՓԻ մեջ տեղավորվում են ավելի մեխանիզմը և փամփուշտները:

Կտրուճ՝ զատիչ-անդրադիմիկի ատամի համար:

Մղլուկ՝ պտուտակի հետ: Բույն՝ պոչի պլոտուտակի համար:




Ծակ՝ հենարանի  
պտուտակի համար:

Զգանի կամըլը-  
ջակ:


Տվիզ ՄԵԽԱՆԻԿԱԳՐԸ

տալիս ե փամ-

փուշտները:



Պահեստատութիւն կափարիչ:



Կող.

Համարի.

Խաղաղի պատճեն և յանդահանուսագործութիւնը.

Համարի.



Համարի.



Ուլուզ թշնաբառը խցում է.



Արդի.

10.

Շամփրով մաքրում են փողը:

ՊԱՐԱԳԱՅՔԸ ամրացնում են հրացանի մասերը:




ԻԵՏԵՎԱԿԻ ԻՐԱՑԱՆ:

Աղուստի  
ողակ.

պառատակներ.  
Հենարանի: Պոչի:

ԻԵՏԵԼՈՎԱԿԻ ԻՐԱՑԱՆ:

Աղ.  
Աղուստի ողակ-  
ների զսոլանակ:



ՊԱՏԿԱՆԵԼԻՔԸ ոլահում-ոլահպանում ե հրացանը:

Փողաբերունի  
ոլահպանակ:

Հրացաններից  
բուրդ կազմելու ող:


Շամփրի  
կոթուա:



Զողիկ.




ՄԱՔՐԻՉՈՎ— մաքրում են փողը:



Լեսոտ.

Կոթ.



Զարկանի ուղիղ  
դնելու և մար-  
քիչն ամբացնելու համար է:




Հրացանի փոկ, խծուծ, փայտիկներ, մաքուր լաքեր,  
յուղ յեվ նավք:


ԼՅՈՒՄԱՍԻ ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ  
Ռուսինի պահպանակ:



Նախկին հրաձգական  
դպրոցի պահպանակ:



ՄԱՐՏԱԿԱՆ ՍՐԱԾԱՅՐ  
ՓԱՄՓՈՒՇՏ:



ՊԱՐԿՈՒԹԻՁԻ մեջ տեղավորվում  
ե դնդակը, վառողը և պատիճը:


ՊԱՏԻՁԸ վառում ե վառողը:

ՎԱՐՈՂԸ նետում ե դնդակը:

ԳԵԴԱԿԸ խփում ե թշնամուն:

Պատիճին մի խփիր, գնդակը մի հանիր, վառողը  
մի թափիր:

ՊԱՀՈՒՆԱԿԸ պա-  
հում և փամփուշտ-  
ները և ողնում ե  
հրացանը լցնելու:



—

## ՀՐԱՑԱՆԻ ՔԱՆԴԵԼԸ

Հրացանը սարքին և մաքուր պահելու համար հարկավոր և նրան կանոնավոր և առանց փշացնելու քանզել կարողանալ, նմանապես հասանալ իմանալ, թե յերբ, և վորման և հարկավոր անջտուել:

Հրացանը բանդելիս յեվ սարելիս հիշե՞ր:



Անջատիր, հանիր և  
տեղը զիր մասերը ըդ-  
գուշությամբ, իրար չը  
կողցնես:

Պառւտակները յետ  
և առաջ վոլորելիս, սպր-  
ուտակիչը պինդ բռնիր,  
կորունները ժի փշացնի:

Յեթե պառւտակը չի  
հնագանդ վում զեկու-  
ցիր, առաջ թե վոչ կամ  
պառւտակի կորունը կը  
փշացնես կամ պառւտա-  
կիչի լեսար:

Հրացանը բանդիր և  
հավաքիր անապատճառ սե-  
ղանի կամ տախտի վրա.  
իսկ յեթե դաշտում ևս  
փռած զբատի վրա, կամ  
տակը բան փռիր, իսկ  
զետնի վրա չգնես:

Նկար 1.

## ՀՐԱՑԱՆԸ ՔԱՆԴԵԼՈՒ ԿԱՐԳԸ

### 1. ՍՎԻՆԸ ՀԱՆԻՐ

Անրիկը շուռ տուր մինչև մութակին հենվելը: Զախ ձեռքի  
բութ մատուի սվինի փողակը հուսդ տուր հրացանի փողին:

Աջ ձեռքի ափով զգուշությամբ ճտին խփելով սվինը  
հանիր: (Տես նկար 1-ն):



Յեթե սկինը դժվարությամբ և դուրս գալիս ապա  
թակով տեղահան արա: Հատիկը պահպանի՛ր:

## 2. ՊՏՈՒՏԱԿԻ՛Ր ՅԵՎ ՎԵՐ ՀԱՆԻՐ ՇԱՄՓՈՒՐԸ

### 3. ՓԱԿԱՂԱԿԸ ՏՈՒՓԻՑ ՀԱՆԻ՛Ր

**Հրացանը դիր**  
սեղանի վրա կամ  
վերցրու ձախ  
ձեռքդ, Զախ ձեռ-  
քի ցուցամատով  
սլինդ հուպ տուր  
ձգանը, իսկ աջ  
ձեռքով բաց արտ  
և հանիր փուկա-  
ղակը (տես նկար  
2-րդ և 3-րդ):



Նկար 2.



### 4. ՓՈՂԱՊԱՏԸ ՀԱՆԻՌ

ա) հետեւյակի հրացան:  
Փոկն արձակիր և դուրս  
քաշիր վերին ձեղքից:  
Վերին ողակը թուլացրու,  
ոլոււտակը ոլուրտիր դեպի  
աջ (ալտուտակիչի նեղ ըե-  
րանով):

Հանիր վերին ողակը:  
Փողապատը փողի վրայով  
վեր շարժիր դեպի հատիկը  
և հանիր: Յեթե չի հան-  
գաւմ, ստորին ողակը թու-  
լացրու:

Թուլացրու ստորին ողա-  
կի ոլոււտակը (ալտուրտակ-  
իչի նեղ ըերանով):

Նկար 3.

բ) Հեծելակի նրացան.

Փռկն արձակիր և դուրս քաշիր վերին ձեղքից:

Ագուստի ողակների զապանակի ծայրը հուպ տուր աւ գուստի մեջ և հանիր վերին ողակը:

Յեթե ողակը դժվարությամբ է դուրս գալիս, մի սեպ դեմ արա և թուկով խփիր:

Նույնպես հանիր և ստորին ողակը:

Բարձրացրու նշանոցի շրջանակը:

Փողապատը փողից զատիր: Փողապատը զդուշությամբ շուռ տուր դեպի ձախ և վերցրու: Նշանոցի շրջանակը իշեցրու տեղը:

Նորից անցրու ստորին ողակը:

Նշանոցի դիտոցը չծռե՛ս:

Հետագա քանդումը կատարվում է մերձավոր պետի ներկայությամբ, վորովհետև պետը ցույց կը տա այն բոլորն, ինչ վոր դու աչքաթող կանես կամ կը թողնես այդ կարևոր դործում:

5. ՓՈՂԸ ԶԱՏԻՐ Ա-  
ԳՈՒՍՏԻՑ

ա) Հրացանը ուղղաձիգ դիր, ձախ ձեռքով բռնիր և հենարանի սլառուտակը յետ վոլորիր սլառուտակիչի լայն բերանով (տես նկար 4-րդ):

բ) Հրացանը վայր դիր, սլանեստատուփը սեղմիր ագուստին և սլոչի սլառուտակը յետ վոլորիր սլառուտակիչի լայն բերանով (տես նկար 5-րդ):

գ) Պահեստատուփը ագուստից բաժանիր:

դ) Հանիր ստորին ողակը:



Նկար 4.

յե) Աշ ձեռքիդ ցու-  
ցամատը, ինչպեսքեզ  
հարմար ե, մոցըու  
փողատուփի մեջ:

Փողը ագուստից բա-  
ժանիր:

Յեթե ագուստը պինդ  
կպել ե փողից, փողը  
չխփես, այլ նրա ծայրը  
դեմ արա և զգուշու-  
թյամբ ագուստը քա-  
շիր:

Զգուշ կերպով փո-  
ղը վայր դիր:

Բաժանված փողը  
շատ հեշտ է ծռելը:



Նկար 5.

### 6. ՔԱՆԴԻՐ ՓԱԿԱՂԱԱԸ

Վերցրու փակաղակը ձախ ձեռքի՝ բռնիր ցուցամա-  
տով և միջամատով խփելու փակը առջևից բռնի մա-  
տով՝ կոթը՝ յետելից:

Աշ ձեռքով բռնիր հրահանը, բաշիր յետ և շուռ տուր  
դեպի ձախ մինչև դեմ առնելը (տես նկար 8-րդ):

Նայիր, վոր արձակելու վոտքը դուրս չդա միացնող  
բանոնի յերկճղից:

Բաժանիր խփելու փակը և միացնող քանոնը փակա-  
ղակի կոթունից:

Հանիր փակը քանոնի վեայից:

Վերցրու ձախ ձեռքով ըլո-  
նատեղը, վակաղակի կո-  
թունը ուղղաձիգ դիր և  
զարկանի տսեղը դեմ ա-  
րաժի վայտի: Բոնատեղը  
հուզ տուր դեպի ցած  
այնպես, վոր խփելու  
զսպանուկը սեղմես և աջ  
ձեռքով հրահանը յետ  
պտուտակիր զարկանից:  
Զախ ձեռքի սեղմումը  
հետզհետե թուլացնելով,  
թույլ տուր կոթունը  
հետզհետե բարձրանա  
վեր (տես նկար 9-րդ):

Հանիը զարկանը և վեր  
բաշիր զսպանակը:

Նկար 6.

#### 7. ՊԱԼԵՍՏԱՏՈՒՓԻՑ ԲԱԺԱՆԻՐ ԿԱՓՍՐԻՉԸ ՏՎԻՉ ՄԵԽԱՆԻՉՄՈՎ

Վերցրու սկա:

Հեռոտատուփը

ձախ ձեռքի՝

կափարիչը դե-

պի վեր, աջ

ձեռքիդ ցուցա-

մատի սկտեղը

դիր մղլակի

գլխին և հուզ

տուր յետ դե-

պի քեզ երաթ

մատով բաց ա-

րա կափարիչը

(տ. նկ. 10-րդ):



Նկար 7.

Տվիչով սեղմիր՝ բոլոր զսպանակները կափարիչին:  
Հանիր կտփարիչը ծխնիի սեռնակից: (Նկ. 11-ըդ):

8. ՊՏԾՈՒՏԱԿԸ ՅԵՏ ՎՈ-  
ԼՈՐԻՐ ՊՏԾՈՒՏԱԿԻԶԻ  
ՆԵՂ ԲԵՐԱՆՈՎ ՅԵՎ ԲԱ-  
ԺԱՆԻՇ ՊԱՀԵՍՏԱՏՈՒՓԻ  
ՄՆԼԱԿԸ  
(Նկար 12):

9. ՔԱՆԴԻՐ ՏՎԻՉ ՄԵ-  
ԽԱՆԻԶՄԸ  
Յետ վոլորիր ձգա-  
նի զսպանակի պտու-  
տակը պտուտակիչի  
լայն բերանով (Նկար  
13):

Դուքս հրի փոյ-  
տիկով ձգանի սեռնա-  
կը:



Նկար 8.

Բաժանիր ձգանը և զսպանակը:  
Հանիր զսպանակը ձգանից:

10. ԻՍԿ ՅԵԹԵ ՊԵՏՔ ԼԻՆԻ ԲԱԺԱՆԵԼ ԶԱՏԻՉ-ԱՆԴՐԱԴԱՐՁԻ-  
ԿԸ, — ԻՆՔԴ ՄԻ ՀԱՆԻՐ, ԱՅԼ ՓՈՂԸ ՀԱՆՉՆԻՐ ԶՈԿԻ ՀՐԱ-  
ՄԱՆԱՏԱՐԻՆ. —

Զոկի հրամանատար, փակտղակի կոթունը դիր փողատումի անցքի մեջ, տեղ հասցրու և շուռ տուր դեպի աջ, փողը դիր հենարանի (սեղանի) վրա. տուր դեպի քեզ, դատիչը դեպի վեր։ Տուփը բռնիր ձախ ձեռքով, յետ գոլորի՞ր դատիչի պտուտակը պտուտակիչի նեղ բերանով, աջ ձեռքի բթաժատով հուզ տալով փորատի ուղղությամբ դատիչի զսպանակային մասի վրա, փորատից դուրս հանիր։

Հատիկն ու նշանոցը չպետք ե դիպչեն հենարանին (Նկար 14)։

Բոլոր բանդիտները մասերը դի՛ր մախուր յեվ չոր լաթի վրա։



Նկար 9.

Բացի առաջ ցույց տված մասերից վոչ մի ուրիշը մի բաժանի՛ր։

## ՀՐԱՑԱՆԻ ՍԱՐՔԵԼԸ

1) ՅԵՐԲ ՀՐԱՑԱՆ ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ՔԱՆԴՎԱԾ Ե, ԶԱ-  
ՏԻՉ-ԱՆԴՐԱԴԱՐՁԻԿԸ ԻՆՔԴ ՄԻ ԴՆԻՐ ՏԵՂԸ, ԱՅԼ ՓՈՂՆ ՈՒ  
ԶԱՏԻՉԸ ՏՈՒՐ ԶՈԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻՆ:

Զոկի հրամանա-  
տաղը, դիր փողը հե-  
նարանի սեղանի  
վրա, կտու առ աջ  
անութիղ տակը՝ փո-  
ղատուփը դեպի ա-  
ռաջ, փողատուփի  
վրա զատիչի համար  
յեղած ձեղքը դե-  
պի վեր:

Այ ձեռքով զա-  
տիչ - անդրադարձի-  
կի կրունկի ծայրը  
դիր տուփի վրայի  
համար յեղած փո-  
րատը, իսկ թաթն  
ուղղիր դեպի տու-  
փի ձեղքը:

Զախ ձեռքով տու-  
փը բռնիր և այդ



Նկար 10.

ձեռքիդ բռնթ մատը դիր զատիչի զսպանակային մասի  
վրա վերևից. աջ ձեռքով բռնիր տուփը, բռնթ մատը դեմ  
արա զատիչի ատամին: Զախ ձեռքի բթամատը հուզ տու-  
լով դեպի վայր զսպանակային մասի վրա և միաժամա-  
նակ աջով՝ դեպի առաջ ատամի վրա՝ մոցրու զատիչը  
փորատի մեջ, պտուտակիչի նեղ բերանով առաջ վոլորիքը  
զատիչի պտուտակը մինչեւ դեմ առնելը (Նկար 15):

Մատով սղմիր զատիչ-անդրադարձիկի թաթը և ըս-  
տուգիր թե ինչպես և բանում:

Այնուհետև սարքից ինքդ,

## 2. ՍԱՐՔԻՐ ՎԱՅՐԻՉՈՒՅՑ ՄԵԽԱՆԻՉԱԾ

Դիր զսպանակը ձգանի ճեղքը:

Զգանը մտցրու փակաղակալով, իսկ զսպանակը ատամով՝  
մեխանիզմի համար յեղած տուփի ճեղքը:

Հաղցրու ձգանի սեռնակը և պառատակը վոլորիր մին-  
չե դեմ առնելը լայն բերանով:

Ստուգիր, թե արդյոք ազատ և շարժվում ձգանը:

Զօպանակի պտուտակը բուլացնել նույնիսկ մտածել  
չհամարձակվես—մեզ կամ բնկերոցդ կը վիրավորես յեվ  
փակաղակի անօտք կը կորցնեմ:

## 3. ՊԱՀԵՍՏԱՏՈՒՓԻ ԿԱՓԱՐԻՉԻ ՄՌԼԱԿԸ ՄՏՑՐՈՒ ՏԵՂԸ

Մղլակի պառատակը պառուտակիր մինչե դեմ առնելը  
պառատակիչի նեղ  
բերանով: Փորձիր,  
թե մղլակի զսպա-  
նակն ինչպես և բա-  
նում:

## 4. ԿԱՓԱՐԻՉԸ ՏՎԻՉ

ՄԵԽԱՆԻՉԱԾԻ ՀԵՏ  
ԴԻՇՊԱՀԵՍՏԱՏՈՒՓԸ

ա) Բոլոր զսպա-  
նակները սղմիր  
կափարիչին:

բ) Կափարիչի  
կտրունի մեջն առ  
ծխնիի սեռնակը:

դ) Զօպանակները  
բաց թող և կափա-  
րիչը փակիր:

## 5. ՓԱԿԱՂԱԿԸ ՍԱՐ- ՔԻՐ

Խփելու զսպանա-



Կը հազցընու կար·  
կանի վրա·  
Դիր նրանց փա-  
կաղակի կոթունի  
անցքը· Ուղղաձիգ  
սղմիր ինչպես և  
քանդել ես, ձախ  
ձեռքով կոթունի  
բռնատեղն և դսպա-  
նակը հուալ տուր  
զարկանի ասեղը մի  
փայտի դեմ անե-  
լով։ Հրահանը պը-  
տուտակիր զարկա-  
նի վրա, բռնատե-  
ղին հուալ տալը  
թուլացնելով, զգու-  
շությամբ հրահանի  
յելունը մտցրու փա-  
կաղակի կոթունի  
կտրունի մեջ։




Նկար 12.

Զարկանի վրայի կտրունը ուղիղ դիր հրահանի խա-  
զերի դիմացը ձեռքովդ։ Յեթե ձեռքով չի լինում, զար-  
կանը պտըտի պտուտակիչի կտրուճով (Նկար 16)։

Զարկանը պահպանի՛ր։

Հազցընու խփելու փակը միացնող քանոնի փակաղա-  
կին և պտհիր առանցքի վրա դեպի աջ մինչև դեմ առ-  
նելը։



Նկար 13.

Զալս ձեռքի մատներով բռնիք փակը քանոնի հետ,  
մտցրու դարկանը քանոնի անցքն այնպես, վոր յերկճիղը  
մտնի խփելու վոտքի փորատները։ Զալս ձեռքի բթամա-  
տով միացնող քանոնը և խփելու փակը կիսլ սեղմելով փա-  
կաղակի կոթունին, ստուգիր ասեղի դուրս դալը պտու-  
տակիչով։ Ասեղը խորը (միջին) կտրունի միջով ազատ և  
անցնում, ծանծաղի միջով չի անցնում (նկար 17 և 18)։

Վերցրու ձախ  
ձեռքդ խփելու փա-  
կըն ու կոթունը,  
ինչպես քանդելու  
ժամանակ. աջով  
բռնիք հրահանը և  
յետ քաշելով քա-  
նոնը յերկճիղից  
դուրս չհանելով, ըդ-  
դուշ կերպով դարձ-  
րու աջ և հրահանի  
պտուկը մտցրու կո-  
թունի ճղակը։

Հրահանի պտու-  
կը չփացնես։

6. ՓՈՂԸ ԴԻՐ Ա-

ԳՈՒՍՏԻ ՄԵԶ

Դիր աղու ստը սե-



Նկար 14։

ղանի վրա։ Դիր փողը աղուստի վաքը (բթամասդ տուփի մեջ)։

Զգանը ուղղելով դեպի  
ճեղքը, տուփը զգուշու-  
թյամբ դիր ագուստի  
վաքը և փողը յետ պա-  
հիր։ Նայիր, վոր ձգանի  
սեռնակը չընկնի կամ  
դուրս չըցցվի (նկար 19)։

Հաղցրու ոտորին ողա-  
կը՝ պտուտակի զլուխը  
դեպի սեռնակը։

Հրացանը բռնիր, ուղ-  
ղաձիգ կերպով դիր, կո-  
թի խզատակով զգու-  
շությամբ խփիր մի պինդ  
առարկայի։

Ներքեից տեղը դիր  
պահեստատուփը։



Նկար 15.

Պտուտակիր պոչի պտուտակը։ Հրացանը պահիր  
ինչպես քանդելիս։ պահեստատուփը սեղմիր ագուստին։

Հրացանը շուռ տուր և ճենարանի պտուտակն ել  
պտուտակիր։

Քանի դեռ ողակները չեն նազգեած յեվ պտուտա-  
կիչները ինչպես հարկն և չեն պտուտակած, պահպանիր  
փողն ու պահեստատուփը, վոր վայր չընկնեն, չծռվեն  
կամ չջարդվեն։

7. ՀԱԳՅՐՈՒ ՓՈՂԱՄԱՏԸ  
Հետեվակի նրացան.

Մոցը ծայրապա-  
նակի յելունները ստո-  
րին ողակի կտրումնե-  
րի մեջ:

Հազգը վերին ո-  
ղակը փողապատի  
ծայրապանակի յե-  
լունների վրա: Ողակ-  
ների սլառութակները  
դեպի ձախ պտտելով  
ողակները ամրացրու  
շափակոր կերպով. այ-  
սինքն՝ այնպես, վոր  
ոլ տուտակը կը կեռ  
շը ջան յետ՝ դե-  
պի այլ ոլ տտելիս



Նկար 16.

ողակը մի փոքր  
յերերա:

Ստուգեցիր, պըտը-  
տիր վորքան հարկա-  
վոր է:

Յերբ ողակները շա-  
պինդ են դիպուկու-  
թյունը պակաս է:

Յեթե հետեակի հը-  
րացանը ճեղքեր ունի  
փոկը անցրու և պըն-  
դացրու:

Հեծելակի նրացան.

Հանիր ստորին ո-  
ղակը:

Չախ ճեռքով փողը  
հուալ տալով ագուս-



Նկար 17.



տին, աջով բարձրացրու նշանոցի շրջանակը,

Անց կացը ըստ շրջանակի փողապատի ճեղքը:

Փողապատը շուռու տուր փողի յերկարությամբ և դիր փողի վրա:

Վայր իջեցը ու նշանոցի շրջանակը:

Հազգը ու ողակները (դրոշմը դեպի զսպանակը) մինչև զսպանակը չըրըխկա:

Յեթե ազուսաը ու ուել ե և հազցնելը դժվար ե, ապա ողակը

Նկար 18

զսպանակից վերև թող:

Յեթե ազուսաը չորացել ե և ողակը շատ թույլ ե, ապա ողակը զսպանակից ներքև իջեցը ու: Փոկն անցկացը ազուսատի ճեղքը և ամրացը ու:

#### 8. ՓԱԿԱՆԱԿԸ ԴԻՐ ՓՈՂԱՏՈՒԹԻՒՄԵԶ

Հրացանը դիր սեղանի կամ ծնկիդ վրա և կոթը դեմ աքա փորիդ:

Չախ ձեռքիդ ցուցամատով սղմիր ձգանը, վորից փակաղական ու ատամը կը սուզվեն:

Աջ ձեռքով փակաղակը մտցը փողատուփի մեջ:

Փակաղակը շուռ տուր դեպի աջ՝ մինչև դեմ առնելը և բաց թող ձգանը:

#### 9. ՇԱՄՓՈՒՐԸ ԽՐԻՐ ՏԵՂԸ ՅԵՎ ՊՏՈՒՏԱԿԻՐ ՀԵՆԱՐԱՆԻ ՄԵԶ:

10. ՀԱԳՑՐՈՒ ՍՎԻՆԸ: ՀԱՏԻԿԻՆ ԶԴԻՊԶԵՍ

Անրիկը շուռ տուր:

## ՀՐԱՑԱՆԻ ՄԱՔՐԵԼԸ.

Բացի ուշադիր խնամքից՝ հրացանը հարկավոր է նարսարությամբ յեվ վարպետութեն մաքել ամբողջությամբ, մանավանդ փողը:

Փողի մաքրումը կատարիր հրաձգությունից անմիջապես հետո: Յեթև ժամանակ չունես հրացանն անմիջապես մաքրելու, փողանցքը յուղիր՝ խծուծով կամ խոզանակով, վորոնք պետք է խխմվեն ամառը յուղով, իսկ ձմեռը նավթով: Գիտցիր յեվ նիւթիր, վար ինչքան էիչ ժամանակ մնա վառօղի այրութը փողի մեջ, այնքան ավելի լավ պահպանված կլինի հրացանը:

Հրացանը մաքրելիս գլխավորապես ուշադրություն դարձրու, վոր ժանդ չերեա, իսկ յեթե յերեաց, յուղ քսիր և լաթով սրբիր, յեթե չի սրբվում, յուղ քսիր, թող մի առ ժամանակ տաքառեղուժ մնա, ապա դրսից մի կակուղ փայտի կտորով ժանդը ջնջիր: Ժանդը հանելիս, միայն կարմրությունը հեռացրու, իսկ յեթե խորդութորդություններ մնան կամ քերծվածներ, չփորձես այն հարթելու, ապա թե վոչ հրացանը կը փչացնես, իսկ ոգուտ չես բերի:

Հրացանը հրածգությունից նետա մաքելու համար՝ պատրասի՛ր նավիք (մաքրած), խծուծ կամ բամբակ, մաքուր լաբ յեվ յուղ:

Զննիր շամփուրը, մաքրիչը փողապատը, լցամասի պահպանակը, կոթառն ու ցողիկը յեվ մաքուր լաբով սրբիր նրանց վրայից փուժին ու ավազը:

*Լաթերը պետք է մաքրուր և կակուղ լինեն:*

*Խծուծը ձեռքումդ տրորիր, մաքրիր ունդերից և փոշին ու ավազը թափ տուր:*

Փողը փողատուփի նշանոցի յեվ նատիկի հետ մաքելու համար դուրս քաշիր շամփուրը, փակաղակը յեվ պահեստատուփի կափարիչը:



Նկար 19.

Յեթե փողապատի  
տակը խոնավու-  
թյուն և բնկել, ապա  
փողանցքի մաքրելը  
վերջացնելուց հե-  
տո հանիր և փո-  
ղապատը: Ասո-  
տիկ անձրեիկ տակ  
մնացած հրացանը  
մաքրելիս, փողը  
որբելուց հետո,  
հրացանը քանդիր:  
Բոլոր մասերը լավ  
որրիր, չորացրու:

ապա մետաղե մասերը յուղիր, նորից անմիջապես սար-  
քիր և սարքած զրության մեջ աղուստը և փողապատը  
դիր չորանա. չորացնելուց հետո հրացանը քանդիր և բոլոր  
մասերն առանձին մաքրիր: Անձրեից հետո յեթե չորրես—  
մետաղե մասերը կը ժանդուտեն:

Յեթե Ազուսան ու փողապատը սարքելն ուշացնես,  
կուշ կը գան և կը ծովեն:

Փողան ցքը մտքը ելու համար շամփուրն  
անցկացրու կոթառի մեջ, շամփորի վրա հազցըրու փողա-  
բերանի պահպանակը, մաքրիչը ողտուտակիր վրան և  
պտուտակիչի վրայի կտրուճներով սլինդ ամրացըրու, վոր-  
պեսզի փողի մեջ յետ չպտուտակիվ և դիր ձողիկը կո-  
թառի ծակը՝ շամփորի զլիսիկի վերեից:

Փորձիր, վու շամփուրն ապա կերպով կոթառի  
մեջ ապա կերպով պտուտ գա:

Փարաբիր մաքրիչի պտըսվոյ մասի վրա խծուծք:

Փողանցքը լոթով մի մաքրիր, ակոսները չորբված  
կը մնան:

Քրա հօգութ խծուծը մի քանի կտոր արա՝ յերկայնքը մոտ մի քառորդ, վերցրու մի փոքր փունջ, հավասարեցրու և կիսով չափ ծալելով, հազասար կերպով փաթաթիր մաքրիչի պտուտակավոր մասը, մաքրիչը մատներով պտտելով։

Խծուծի մնացած ծայրերն ամուր կծկիր, վոր շամփուրը դեպի փողաբերանը յետ քաշելիս խծուծը վոլորք չկազմի կամ կրկապ չընկնի։

Խծուծը մաքրիչի պղնձե մասից դենք չփոլորես, ապա թե վոչ մաքրիչը չի պտտվի։

Հետեւից, վոր մաքրիչը խծուծի նես փողանցքը որսի փոքր սփմամբ, ակոսները լցնելով։



Ակոսը 20.

Փաթաթած խծուծը թլր-ջիր մինչև խոնավանալը յուղով կամ նավթով։


Մաքրելուն ձեռնամուխ լինելիս ել հրացանը դիր առջեղ ուղղածիդ կերպով, ծնկներիդ մեջ։

Դիր շամփուրի մաքրիչը խծուծի նես փողանցքը (Նկար № 20): Եամփուրը առաջ տար մինչեվ փողի կեսը։

Փողի վրա հազցրու փողաբերանի պահպանակը (հատիկից զգուշ կաց), Փողապատճ այնպես շուռ տուր, վոր հատիկի հիմքը մանի փողապատի խտաբնակի փորատը։

Հրացանի կոթը  
գեղի առաջ տար  
և մի բանի դեմ  
արա (Նկար 21):

Հրացանը թեք  
դրության մեջ ձախ  
ձեռքով փողաբերա-  
նի պահպանակից  
բռնած, դանդաղ  
կերպով, առանց  
շամփուրը ծռելու  
սկսիր մաքրել: Հի-  
շիք, վոր արագ  
շարժումը ստիպում  
է փաթաթած խը-  
ժուծը թռչկոտել ա-  
կասից ակոս, իսկ  
դանդաղ շարժումը  
խծուծը տանում է



Նկար 21.

ակոսի միջով ստիպելով մաքրեչին (շամփորին) պտըտվել:  
Յերբ խծուծը չափազանց թռւյլ է փաթաթած, այն ժա-  
մանակ ակոսների անկյունները վատ են մաքրվում,  
նրանց մեջ կեղտ է մնում և կարող է ժանդ առաջանալ:

Շամփուրը՝ սահուն կերպով շարժիր անդքի ամբողջ  
յերկարությամբ և հենց վոր ձեռքով կղզաս, վոր մաք-  
քիչը մտնում է գնդակի մուտքը, շամփուրը յետ քաշիր՝  
մինչև վոր մաքրիչը դեմ առնի փողաբերանի պահպանա-  
կին:

Փողանցքով շամփուրը խծուծի հետ յերկու յերեք  
անդամ տար ու բեր, խծուծը փոխիր, անցքը մաքրիր,  
խծուծը փոխելով, մինչև վոր նա մաքուր դուրս գա:

Յերբ մաքրեցիր պրծար, փողաբերանի պահպանակը  
հանիր փողի վրայից:

Աւշաղը ությամբ և զգուշությամբ (առանց շամփուրը ծռելու) ժաքրիս փողաբերանի ծայրն ել:

Հիշիր՝ փողաբերանի ուղղություն ե տախ գնդակին:

Անցը մաքրելուց հետո նույն կարդով խծուծը փոխելով, ժաքրիր փամփշտանոցը գնդակի մուտքի հետո:



Նկար 22

Յերբ փողաբերանից ես մաքրում-փողաբերանի պահպանակն ուղղություն ե տալիս շամփուրին, յերբ փամփշտանոցի կողմից ես մաքրում, յցամասի պահպանակը մտցրու փողատուփը և ձախ ձեռքի բութ մա-

տով պահիր, վոր դուրս չընկնի: (Նկար 22):

Կեղտը կապտությունից ջոկիր, վորովհետեւ նույնիսկ մաքրուր փողն ել խծուծի վրա կապտություն ե տալիս:

Յեթե շամփուրը փողանցքի մեջ լովի, չմտածես դուրս խփել, այլ անցքի մեջ մի քիչ տաքացրած յուղ ածա, և մի յերկու բուզե թող, ապա հեշտությամբ շամփուրը կը հանես:

Շամփուրը մաքրիչի հետ լովում և փողանցքի մեջ, յերբ խծուծը թույլ ե փաթաթած կամ շատ պինդ:

Ամեն անգամ, յերբ շամփուրը հանում ես խծուծը փոխելու համար, մտիկ արա արդյոք մաքրիչը յետ չի պտուտակվել:

Պատահում ե, վոր մաքրիչը յետ ե պտուտակվում և մնում ե փողի մեջ. այդ դեպքում քո շամփուրով դուրս մի հրի, այլ վերցրու ընկերոջդ շամփուրն՝ արդեն հաղցըրած մաքրիչով և փաթաթած խծուծով և նրանով դուրս

Քշիրքո մաքրիչը, ապա թե զոչ փողանցքը կը քերծես բո-  
շամփուրի պողպատե ծայրով մաքրիչը վորոնելիս:

Պինդ լոված մաքրիչը դուրս մի խփիր—արհեստանո-  
ցում կը հանեն:

Առանձին ուշադրությամբ հետեւիր, վոր հրաձգու-  
թյունից հետո վառողի այրուք չմնա ակոսների անկյուն-  
ներում:

Ինչպես վոր մաքրել ես անցքը այնպես ել մաքրիր  
փամփշտանոցը գնդակի մուտքի մեջ կեղա-  
չմնա: Այդ մասերը սրբելիս, վառողի այրուքը չխրես-  
փողատուփի փորատներն ու կորուճները, վորոնք այն-  
պես մոտիկ են փամփշտանոցին:

Փամփշտանոցը մաքրելիս մտիկ արա, վոր փամփշշ-  
տանոցում թեքատի վրա և գնդակի մուտքի մեջ կեղա-  
չմնա: Այդ մասերը սրբելիս, վառողի այրուքը չխրես-  
փողատուփի փորատներն ու կորուճները, վորոնք այն-  
պես մոտիկ են փամփշտանոցին:

Փողը մաքրելուց հետո, զննիր անցքը, մտիկ արա  
արդյոք այրուք չի մնացել մանավանդ ակոսների ան-  
կյուններում, արդյոք կարմրություն այսինքն՝ ժանդ-  
չկա: Յեթե ժանդ կամ այրուք նկատեցիր շարունակիր ա-  
ռաջվա նման յուղած խծուծով մաքրել:

Յեթե դրանով ել չի սրբվում, չմտածես նաժդակով,  
կավիճով կամ աղյուսով մաքրել. դեկուցիր, արհեստա-  
նոցում կը մաքրեն:

Փողը մաքրելը վերջացրիր, անպատճառ յուղիր անց-  
քը և փամփշտանոցը: Մաքրիչը պատիր մաքուք խծու-  
ծով կամ խողանակը սլտուտակիր շամփուրի վրա. չա-  
փափոր խխմիր յուղով և շամփուրը սահուն կերպով ա-  
ռաջացրու, վօրպեսզի ակոսներն ու առերը համահավա-  
սար յուղվեն:

Առատ մի յուղիր:

Միշտ հրացանը մաքրելիս փակաղակն ամեն կողմից  
որբիր չոր լաթերով և ապա յուղոտ լաթով:

Փակաղակը կարիք չեղած տեղը մի քանդիր։ Հրահանը յետ քաշիր, սրբիր և յուղիր։

Յեթե կարմրություն և յերեացել կամ փակաղակի շարժումն և դժվարանում, քանդիր այն։

Փակաղակի մասերը մաքրելիս բոլոր անցքերն ու ծակերը մաքրիր լաթով պատած փայտիկներով։

Փողատուփն ու պահեստատուփը ներսից լավ սրբիր լաթով. անկյունները, ճեղքերը, ծակերը և ծալքերը՝ սըրբիր լաթով պատած փափուկ փայտիկով։

Յեթե գաղերի դեպի յետ պոռթկում և տեղի ունեցել, ապա զննիր խփելու փակը, զարկանը, խփելու զբաղանակը և բոլոր այն մասերը, վորոնց վրա այրուք և յերեացել, առանձին խնամքով սրբիր մինչև վոր այրուքը բոլորովին անհետանա։

Այրուքը սրբիր նավթով ներծծված լաթով։ Հետո լավ չորացրու և յուղիր։

Զատիչ-անդրադարձիկը յերեեր յետ չհրես, այլ դըրսի կողմից սրբիր։

Փողը՝ փողատուփի հետ, ձգանի մասերը, նշանացը, հատիկը, պահեստատուփը, տվիչ մեխանիզմը, սվինը, շամփուրը, պալաւագայքը և բոլոր պտուտակները սրբիր նախ չոր, ապա յուղու լաթով։

Յեթե հրաձգությունից հետո այս մասերի վրա վառողի այրուք լինի, սկզբում նավթով խխմած լաթով սըրբիր ու հետո չոր լաթով և յուղիր։

Անցքերը, ծակերը, փորատները և բոլոր ծալքերը սրբիր, դննիր, մաքրիր և յուղու լաթով սրբիր։

Ագուստն ու փողապատը սրբիր միայն չոր լաթով։

## ՀՐԱՑԱՆԸ ՄԱՔՐԵԼՈՒՑ ՀԵՏՈ

Դրսի կողմից հրացանը սրբիր ավելորդ յուղից, աղուստը բոլորովին չորացրու։

Փակաղակը բաց արա։

Հրահանը շուռ տուր դեպի ձախ:

Հրացանը վոչ թե անկյունը դիր, կամ պատին դեմ  
արտ, այլ անպատճառ բուրգը (իր տեղը) դիր:

Հիշի՛ր, վոր քրեան ձեռքերից նույնիսկ մաքուր  
յուղած երացանի վրա ել կարող են նեսեր մնալ.

### ՀՐԱՑԱՆԻ ՊԱՀՊԱՆԵԼԸ.

Հրացանը պահպանելու համար պահիր և կատարիլ  
հետեւյալը:

Մառայության գնալիս մտիկ արա վոր՝

Շամփուրը պտուտակված լինի:

Սվինի անրիկը տեղը ձգած լինի:

Ողակները շատ պինդ պտուտակած չլինեն:

1910 թ. տիպարի նշանոցի անրիկը մինչև դեմ առ-  
նելը յետ քաշած լինի:

Զարկանի ասեղը վոչ մեծ, վոչ փոքր, այլ պտու-  
տակիչի կտրուճի համեմատ լինի, ինչպես սովորեցրել են-  
ֆակաղակը փակ լինի:

Փորձիր, վոր փակաղակը դուրս չսողա: Յեթե դուրս  
ե սողում, ձգանի պտուտակն ամրացրու:

Հրահանը իջեցրած լինի:

Պահեստատուփը փակ լինի:

Ամեն անզամ ծառայությունից դալիս՝ փողանցքն-  
ու փամփշտանոցը սրբիր:

Յեթե անձրեվ, մառախուղ կամ ձյուն ե յեղել և  
ազուսար փողապատի հետ թրջվել են, փողանցքը սրբիր,  
հրացանը քանդիր, բոլոր մասերը սրբիր, չորացրու, հե-  
տո մետաղե մասերը յուղիր, նորից անմիջապես սարքիր  
և սարքած ձեռվ կամաց-կամաց չորացրու, հետո քանդիր  
և լավ սրբիր ու յուղիր:

Հիշիր, վոր թաց փայտն արագ չորացնելուց ծովում  
և կռանում ե: Յեթե սառնամանիք ե յեղել, թող քրտնի-  
նախ մաքուր հետո յուղու լաթով սրբիր:

Տանը, զորանոցում ամեն ինչ ձեռքիդ տակն է, բայց պահակում, ճտկատում, զորաշարժի ժամանակ, եղ չենք խոսում պատերազմի մասին, շատ բան պակաս ե լինում։ Աւոտի միշտ մոտդ սարքին պահիր պատկանելիքն ու պաշարդ։

Յեթե ժամանակին վորեվի անհօտություն նկատեցիր, անմիջապես գեկուցիր, թե չե վոր ծուլացել ես, բաց թողել կամ մոռացել զինելու հրացանդ կը ժանգոսիւ-

Հրացանը պետք ե պահել զորանոցում բուրդի մեջ՝ սվինով, փակաղակը բաց, հրահանը դեպի ձախ շուռ տված։

Ճամբարում (լագերում) բուրդի մեջ՝ սվինով. հոգտար, վոր հրացանը ընից չընկնի։ Փակաղակը բաց և հրահանը դեպի ձախ դարձած պիտի լինի։

Փակաղակը, հրահանը մի՛ մօռանա։

Պահակում՝ բուրդի մեջ՝ սվինով, փակաղակը փակ։

Պահակից յեկար, զննիր և սրբիր չոր ու յուղութաթով։

Դաշտում՝ բացոթյագում՝ բուրդի մեջ՝ պարանեկառ փոկե ողակը սվինների վրայով իջեցրու վոչ ավելի, քան մինչև կեսը։

Բուրդ կազմելիս կառ քանդելիս հատիկը պահպանիր Յեթե պետք ե դետնի վրտ դնել, ընարիր չոր տեղ և պառկեցրու կոթը դեպի ներքեւ և սվինի վրա, զղուշ կաց վորեւ մեկը վրան չկոխե, կամ անզգուշաբար վրան չընկնի և նայիր, վոր կեղտ, ավաղ և ձյուն չընկնի փողանցքը։

Սենյակում՝ դարակի, պատի վրա պահիր՝ դռնից վառարանից և տանու իրերից ու կահկարասիներից հեռու, վոր հրացանին վոչ վոք ձեռք չտա։ Յեթե սենյակը փոքը ե, շարժվելու տեղ չկա, հրացանդ կախիր չոր և մաքուր տեղում՝ փողաբերանը դեպի դռան հակուսակ կողմը, փակաղակը բաց, հրահանը դեպի ձախ սվինը կարելի ե հանել։

Վագոնում՝ ծնկներիդ մեջ, ուղղաձիգ, սվինը հանած,  
թամբ բուրգերի մեջ (սվինը շամփուրի վրա):

Յերթում հրացանի փոկի վրա ուսընդանութ. նայիր,  
մը հրացանի փոկը լավ ամրացրած լինի: Զրից անցնե-  
միս հրացանը վեր բարձրացրու, վոր շրթրջվի:

Չիու վրա՝ հրացանի փոկի վրա ուսընդանութ կատ  
ձեռքիդ: Թամբից մի կախիր, թամբի կեռին մի կապիր,  
հրացանդ եր վնասես:

Մայլի վրա՝ հրացանդ պահիր հազցրած սվինով ծընկ-  
ներիդ մեջտեղն ուղղաձիգ: Ծայրահեղ դեպքում դիր  
փափուկ իրերի վրա, չմոռանաս հրացանդ կապել կամ  
պատել վոլորած ծղոտով. նայիր, վոր վայր չընկնի,  
իրերի մեջ մի դիր:

### ՅԵՐԲԵՔ ԶՄՈՌԱՆԱՍ

Զգուշ կաց, վոր չհրես կամ չխփես հատիկին ու փո-  
ղին, նշանոցին ու սվինին, ապա թե վոչ հրացանը քեզ  
ել չի լսի, այն ճշտությունն ել չի լինի հրաձդության և  
սվինամարաի ժամին:

Կոթը գետնին մի խփիր—ագուստը ելը ձգես:

Հրացանը սվինով դեպի դետին մի իջեցնի, հրացանը  
վայր կը ձգես՝ սվինը կծռես, կարելի յե և փողը վնասես:

Զուր մի խոցիր սվինով, թշնամուդ խոցելու համար  
պետք կը գա, իսկ խրտվիլակի համար կան վարժական հրա-  
ցաններ:

Զգանի զսպանակը թուլացնել չհամարձակվես, թե չե  
հրահանը դուրս կը թռչի, քեզ և ընկերոջդ կը վիրավորես և  
անշուշտ փակաղակը կը կորցնես:

Փակաղակն առանց փամփուշտի զուր մի փակիր,  
հրահանն առանց հարկավորության մի իջեցնի:

Տրորված վարժական փամփուշտով մի լցնիր հրա-  
ցանդ և այդպիսին պայուսակումդ մի պահիր:

Յեթե պահպանիչ վոտքի վրա յես դնում՝ կոթը ձեռ-

քիդ դեմ արա, հրահանը պինդ յետ քաշիր, ավելի դեպի  
ձախ շուռ տուր, այդպես անշուշտ փորոքը կը մտցնես:

Նշանոցի շրջանակը և անրիկը պահպանիր, շարժիր  
և իջեցրու դդուշությամբ։ Զմոռանաս սեղմել մղլակը։

Փողարերանը մի խցիր, յուղով մի ծեփիր. յեթէ  
հրաձգության ժամանակ մոռանաս, փողը կուռչի։

Խիցը կամ ծեփը ժանդից չի պաշտպանի, յերբեմն  
ել ինքը ժանդ կառաջացնի։

Յեթէ հնարավորություն կա, հրաձգությունից ա-  
ռաջ փողը սրբիր, փոշին հեռացրու, հետո անցքը զննիր։

Հրացանը լցնելիս պահունակը յետ ձգիր, վե-  
րին փամփուշտը սղմիր պահունակի մոտից, զատիչի  
տակովն արա և պահունակը դուրս ձգիր։

Հետո փամփուշտը քշիր փամփշտանոց, յեթէ փամ-  
փուշտը ճանապարհին դեմ ե առնում, փակաղակը չջար-  
դես, յետ տար այն, վորպեսզի փամփուշտը ուղղվի, թե  
չե հարկավոր ե մատով ուղղել։

Յերբ փամփուշտը փամփշտանոցումն եւ և փակա-  
ղակն իր տեղում, այն ժամանակ կոթր պետք ե բոլորու-  
ին աջ պառկած լինի. հիշիր այդ. յեթէ տեղը չհասցնես,  
հրացանը չի բացվիլ։

Փամփուշտները խնայիր։ Յեթէ գետին ընկած փամ-  
փուշտ ես վերցրել լավ սրբիր և զննիր, թե չե փողը  
կը ներծիս։

---

## ԲԱՐԱՁՈՒՅԾ

*Ագուստ* — Ложа

*Ակոս* — Нарез

*Այրուք (վառպղի)* — Нагар (порохсвой)

*Անրիկ (սվինի, նշանոցի)* — Хомутик (штыка и при-  
цела)

*Անցք* — Канал

*Առ* — Поле

*Ասեղ* — Боек

*Ատամ* — Шептало

*Բոցավառել* — Воспламенять

*Բույն* — Гнездо

*Բուրդ* — Пирамида, козлы.

*Բոնատեղ* — Шейка (приклада), рукоятка (затвора).

*Գնդակ* — Пуля.

*Գրան* — Шинель.

*Դիպուկություն* — Меткость.

*Զատիչ-անդրադարձիկ* — Отсечка-отражатель.

*Զարկան* — Ударник.

*Զննելը* — Осмотр; осматривать.

*Զապանակ* — Пружина.

*Թաթ* — Лопасть

*Թակ* — Колотушка.

*Թոփշը (գնդակի)* — Полет (пули).

*Լաթ* — Тряпка.

*Լեստ* — Лезвие.

*Լցամասի պահպանակ* — Вкладыш.

*Խազ* — Черточка.

*Խզատակ* — Затылок (приклада).

*Խծուճ* — Пакля.

*Խփելու զսպանակ* — Боевая пружина,

*Խփելու փակ* — Боевая личинка

*Եմկ* — Дыра.

*Եայրապանակ (փողապատի)* — Наконечник  
(ствольной накладки).

*Եխնիի սեռնակ* — Шарнирный болт.

*Կեռ շրջան* — Пол оборота

*Կոթ* — Приклад.

*Կոթուն* — Стебель.

*Կոճակ (հրահանի)* — Пуговка (курка).

*Կորուճ* — Вырез.

*Կորուն* — Прорезь.

*Կորվածք* — Обрез.

*Հատիկ* — Мушка.

*Հեծելակի (հրացան)* — Кавалерийская (винтовка).

*Հենարան* — Упор.

*Հենարանի պտուտակ* — Винт упора.

*Հետեակի (հրացան)* — Пехотная (винтовка).

*Հրահան* — Курок.

*Հրաձգարան* — Стрельбище.

*Հրաձգություն* — стрельба.

*Հրացան* — Винтовка, ружье.

*Հրացանաձիգ* — Стрелок.

*Զդան* — Спусковой крючок.

*Զդանի զսպանակ* — Спусковая пружина,

*Զդանի զսպանակի պտուտակ* — Винт спусковой  
пружины.

*Զդանի կամրջակ* — Спусковая скоба.

*Ճեղք* — Щель.

*Ճիտ (սլինի)* — Шейка (штыка).

*Ճղակ* — Зарез.

*Մաքրելը (հրացանի)* — Чистка (винтовки).

*Մաքրիչ* — Протирка.

*Միացնող քանոն* — Соединительная планка.

*Մղակ* — Защелка.

*Մութակ* — Стойка.

*Յելուն* — Выступ.

*Յերեքդանի (հրացան)* — Трехлинейная винтовка.

*Յերկճիղ* — Вилка.

*Յուղ* — Смазка.

*Նաժդակ* — Наждак.

*Նավթ* — Керосин.

*Նետիչ* — Выбрасыватель.

*Նշանոց* — Прицел.

*Նշանոցի շրջանակ* — При цельная рамка.

*Շամփուր* — Шомпол.

*Շամփրի կոթառ* — Шомпольная муфта.

*Շամփրոց* — Шомпольный упор.

*Ռըշանակ* — Рамка.

*Ող կամ ողակներ (ագուստի)* — кольца (ложевые).

*Ող (հրացաններից բուրգ կազմելու համար)* — Кольцо  
(для составления ружей в козлы)

*Ունկ* — Ушко.

*Պահեստատուփ* — Магазинная коробка.

*Պահեստատուփի կափարիչ* — Крышка магазинной ко-  
робки.

*Պահունակ* — Обойма.

*Պահպանական յելուն* — Предохранительный выступ.

- Պահպանիչ փողք** — Предохранительный взвод.  
**Պատիճ** — Капсюль.  
**Պատուհան (վերին, ստորին)** — Окно (верхнее, нижнее).  
**Պարագայք** — Прибор.  
**Պարկուճ** — Гильза.  
**Պոչ** — Хвост.  
**Պոչի պուտակ** — Хвостовой винт.  
**Պուտակ** — Винт.  
**Պուռկ** — Сосок.  
**Պուտակել** — завинчивать.  
**Պուտակել յիտ** — Отвинчивать, вывинчивать.  
**Պուտակիչ** — Отвертка.  
**Պուտակային յելուն** — Винтовой выступ.  
**Զարդվածք** — Забоина.  
  
**Սարքելը (հրացանի)** — Сборка (винтовки).  
**Սեռնակ** — Шпилька.  
**Սեղ** — Колышек.  
**Սփն** — Штык.  
**Սրածայր (զնդակ)** — Остроконечная (пуля).  
**Սրբել** — Протирать.  
  
**Վայրի ջույց մեխանիզմ** — Спусковой механизм.  
**Վառոդ** — Порох.  
**Վաք** — Жолоб.  
  
**Տիպար** — Образец (винтовки, прицела).  
**Տվիչ մեխանիզմ** — Подающий механизм.  
**Տրամաչափ** — Калибр.  
  
**Փակաղակ** — Затвор.  
**Փակաղակալ** — Затворная задержка.  
**Փամփուշտ** — Патрон.

*Փամփշտանոց* — Патронник.

*Փայտիկ* — Палочка.

*Փոլ* — Ремень.

*Փող* — Ствол.

*Փողակ (սվինի, միացնող բանոնի)* — Трубка (штыка, соединительной планки).

*Փողարերան* — Дуло.

*Փողարերանի պահպանակ* — Дульная накладка.

*Փողակալ* — Цевье.

*Փողապատ* — Ствольная накладка.

*Փողատուփ* — Ствольная коробка.

*Փորատ* — Паз.

*Փորոք* — Выем (ка).

*Քանդելը (հրացանի)* — Разборка (винтовки).

---

# Վ Բ Ի Պ Ա Կ Ն Ե Ր

ՏՊԱԱԾ Ե

ՊԻՏԻ ԼԻՒԻ

Եջ	2	վերեկից	տող	5	կացինի	կացնի
»	»	»	»	»	հնցողն	հնձողն
»	7	ներքեկից	»	11	չափերուվ	չափերով
»	11	վերեկից	»	7	հրացանը	հրացանը
»	31	ներքեկից	»	8	ցողիկը	ձողիկը
»	»	»	»	13	Ազուսան	ազուսան
»	»	»	»	5	Փորձիր, վոր Փորձիր, վոր շամաբուրն ա-	շամիուրն
					զատ կերպով կո-	կոթառի
					թառի մեջ ազատ	մեջ ազատ
					կերպով պառատ	կերպով
					գա:	պառատ գա:



# Յ Ա Ն Կ

	<i>bչ</i>
<b>ԱՌԱՋԱԲԱՆ</b>	<b>3</b>
Հրացանի յերկայնությունը	7
Հրացանի բաշը	7
Հրացանի մասերը	8
Հրացանի քանդելը	17
Հրացանը բանդելու կարգը	17
Հրացանի սարքելը	24
Հրացանի մաքրելը	31
Հրացանը մաքրելու հետո	37
Հրացանի պահպանելը	38
Ցերեկ չմոռանաս	40
Բառացուցակ	42
Վրիպակներ	47



X

ՀԱՅԻ. ԽՄԲԱԴ.-ՀՐԱՏ. ԿՈՎԵԴԻՍՅԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅ  
ԹՅԱՄԲ ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

ԳԻՒՆԸ

1. Ենգալդ, Հրացանա Հրաձգային գործ  
փոխ. Գ. Կուրանյան . . . . . 35 լ.
2. 1. Տրոցկի, Կարմիր հուշատեար  
թարգ. Գ. Տ.-Ա. . . . . 20 լ.
3. Գորլովսկի, Բանվոր գաստկարզի և  
Ռ. Կ. Կ. ղբողի տակ  
թարգ. Լ. Դանիելյան . . . . . 40 լ.
4. Կոզլովսկի, Քողարկում, Լ. մաս  
թարգ. Հ. Ալեքյան . . . . . 20 լ.
5. Գորլովսկի, Քողարկում Ա և Ա մաս  
թարգ. Հ. Ալեքյան . . . . . 50 լ.
6. Ս. Ռաֆես, Կարմիր բանակ  
թարգ. Մ. Տ.-Հովհաննիսյան . . . 15 լ.
7. Հուշատեար Հրացանաձիգ կարմիր բանա-  
կայինի 1891 թվականի տիպարի Յ գծանի  
հրացանը խնամելու համար.  
թարգ. Մ. Տ.-Հովհաննիսյան . . . 20 լ.

ՏՊԱԳՐՎՈՒՄ ԵՆ

1. Հետեակի մարտական ծառայությունը.
  2. Հետեակի ժամանակավոր մարտական կանոնա-  
դիրք 1 մաս.
  3. Հետեազորի սաղմովորություն.
- 

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0003163

A-II  
23840

146.

ԳՐԱՆ և 20 ԿՈՎԵԿ

